Հետազոտական աշխատանքների իրականացումից եվ գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների վերլուծություն

(2024-2025 ուստարի)

22. 05. 2025

Ելնելով Մասնաճյուղի ռազմավարական նպատակներից՝ Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինն իրականացրել է 2024-2025 ուստարում մասնաճյուղի 4 ֆակուլտետների 34 մասնագիտական դասընթացների շրջանակներում իրականացված 4-րդ կուրսերի ուսանողների (1-ին կիսամյակ) հետազոտական աշխատանքների կազմակերպման վերլուծություն:

Հարցման նպատակն է՝ բացահայտել հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, գրանցել նախորդ կիսամյակի հետ համեմատության դինամիկան, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. կատարած աշխատանքից,
3. հետազոտական աշխատանքների կազմակերպումից,
4. հետազոտական աշխատանքների գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով: Հարցման իրականացման և ուսանողների ակտիվ մասնակցության ապահովման համար բաժինը համագործակցել է դեկանատների և ուսանողական կառույցների ներկայացուցիչների

հետ: Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած 154 ուսանողներից **86-ը** (56%), որը այնքան էլ բարձր ցուցանիշ չէ:

Հարցման արդյունքները հավաքագրվել և վերլուծվել են Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կողմից:

Այժմ ներկայացնենք առանձին գործընթացների վերաբերյալ հարցման ամփոփ արդյունքները և դրանց վերլուծությունը:

Գնահատման 5 միավորանոց համակարգում՝ հետազոտական աշխատանքի իրականացումից ուսանողների բավարարվածությունը ֆակուլտետներում տատանվել է 4.4 – 4.8 **(նախորդ ուստարի՝ 4.3 - 4.9)**, ընդհանուր մասնաճյուղում բավարավածության միջին գնահատականը կազմել է 4.6 **(նախորդ ուստարի՝4. 5)**: Արդյունքը գահացնող է և փաստում է մասնաճյուղի հետևողական և բարձր մակարդակի գործունեությունը:

Հետազոտական աշխատանքների իրականացման նպատակներն են ուսանողների մոտ զարգացնել մասնագիտական անհրաժեշտ հմտություններ՝ գործնական կիրառության, թիմային համագործակցության, տվյալների հետ աշխատելու, վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսակետից:

Հարցումների արդյունքների հիման վրա կարելի է պարզել, թե հետազոտական աշխատանքների ինչպիսի ազդեցություններ են տեսել ուսանողներն իրենց վրա:

Ցուցանիշ	Տոկոս (%)	Վերլուծություն
Նոր գիտելիքներ	26%	Հետազոտական աշխատանքը նպաստել է ուսանողների տեսական գիտելիքների հարստացմանը, ակադեմիական աշխարհայացքի ընդլայնմանը:
Գործնական կարողություններ	21%	Ուսանողները ձեռք են բերել տվյալների հավաքման, պլանավորման, թիմային աշխատանքի և ժամանակի կառավարման հմտություններ՝ կապ ստեղծելով ուսումնառության և իրական կյանքի միջև: Սա բարձրացնում է ուսանողների գործնական պատրաստվածության մակարդակը:
Մասնագիտական հմտություններ	17%	Հետազոտական աշխատանքների պատրաստման գործընթացը նպաստել է կոնկրետ մասնագիտական գործիքների և մեթոդների տիրապետմանը՝ ուսանողների մոտ ձևավորելով մասնագիտական հմտություններ
Վերլուծելու կարողություններ	15%	Ուսանողների մոտ զարգացել է տեղեկատվությունը համադրելու և դասակարգելու ունակություն, ինչը կարևոր է ուսումնական և

Ցուցանիշ	Տոկոս (%)	Վերլուծություն
		գիտական աշխատանքի համար: Սակայն այս հմտությունը դեռ ունի լրացուցիչ զարգացման կարիք:
Դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակություններ	**12%**	Ելնելով համեմատաբար ցածր ցուցանիշից, կարելի է եզրակացնել, որ ուսանողները որոշ չափով դժվարանում են ճիշտ եզրակացություններ անել, ինչը կարող է պայմանավորված լինել մեթոդաբանական գիտելիքների պակասով:
Ինքնուրույն աշխատելու ունակություններ	**10%**	Ուսանողների մեծ մասը ձեռք է բերել ինքնուրույնության փորձ, ինչը շատ կարևոր է հետագա մասնագիտական զարգացման համար:

Ամփոփելով հետազոտության արդյունքների վերլուծությունը համեմատաբար առաջընթաց գրանցվել է **նոր գիտելիքների ձեռքբերման (26%), գործնական կարողություններ (21%)** և **մասնագիտական հմտություններ (17%)** ցուցանիշների մասով: Սակայն վերլուծելու կարողությունները (15%), դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակությունները (12%) և ինքնուրույն աշխատելու ունակությունները (10%) դեռևս բարելավման կարիք ունեն:

Առաջարկներ.

ՈՒսանողների վերլուծելու կարողությունները զարգացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել գործնական սեմինարներ, որտեղ ուսանողները կսովորեն տեղեկատվության վերլուծության մեթոդներ՝ համեմատում, ընդհանրացում, խմբավորում: Դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակությունները բարելավելու համար անհրաժեշտ է պարբերաբար հանձնարարել առաջադրանքներ, որոնցում ուսանողը պետք է փաստերի հիման վրա ձևավորի եզրակացություն, հիմնավորի տեսակետներ, կազմակերպել քեյսերի վրա դասընթացներ և դերային խաղերի ֆորմատով քննարկումներ, որտեղ ուսանողը պետք է պաշտպանի կամ հակադարձի որևէ տեսակետ՝ հիմնավոր կերպով:

Ինքնուրույն աշխատելու ունակությունները զարգացնելու համար անհրաժեշտ է ուսանողներին բաժանել թիմերի՝ սահմանափակելով դասախոսների ուղղորդումը, փոխարենը տրամադրել գործիքներ (ուսումնասիրության ուղեցույցներ, ձևանմուշներ),

յուրաքանչյուր ուսումնական առարկայի շրջանակում ուսանողներին տալ անհատական առաջադրանքներ՝ հստակ վերջնաժամկետով:

Առանցքային հարցերի վերլուծություն

1. Հարց. «Իրականացման տեսանկյունից Ձեզ համար ի՞նչ չափով էր բարդ հանձնարարված հետազոտական աշխատանքը»,

- 76% – «Ընթացքում շատ նոր բաներ սովորեցի»
- 24% – «Հեշտությամբ կատարեցի աշխատանքը»
- 0% – «Այդպես էլ մինչև վերջ չկարողացա հաղթահարել»

1. «Ընթացքում շատ նոր բաներ սովորեցի» – 76%

Սա վկայում է, որ հետազոտական աշխատանքներն ունեցել են ուսուցողական մեծ պոտենցիալ, նպաստել են նոր փորձի, գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը: Աշխատանքը չափազանց հեշտ չի եղել, այլ պահանջել է ջանք ու ներգրավվածություն՝ ինչն էլ կրթական առումով արդյունավետ է:

2. «Հեշտությամբ կատարեցի աշխատանքը» – 24%

Այս խմբի ուսանողները հետազոտական աշխատանք կատարելիս չեն հանդիպել բարդությունների, հավանաբար՝ արդեն ունեցել են որոշակի փորձ կամ ինքնուրույնություն: Սակայն այստեղ կարելի է ենթադրել նաև, որ որոշ ուսանողների համար առաջադրանքը եղել է չափազանց հեշտ:

3. «Այդպես էլ մինչև վերջ չկարողացա հաղթահարել» – 0%

Այստեղ ունենք բարձր ցուցանիշ. այն վկայում է, որ հետազոտական աշխատանքը ուսանողների համար հասանելի է եղել, չնայած իր բարդությանը, կարելի է եզրակացնել, որ այստեղ ապահովվել է դասախոսների ուղեկցող դերակատարությունը:

2. Հարց. «Ծանո՞թ եք եղել գնահատման չափանիշներին ». ուսանողների մեծամասնությունը նշել է «Այո»

- 94% – «Այո»
- 6% – «Ոչ»

Սա խոսում է այն մասին, որ մասնաճյուղը արդյունավետ կերպով տեղեկացրել է ուսանողներին աշխատանքների գնահատման չափանիշների մասին:

3. Հարց. Բավարարվա՞ծ եք արդյոք հետազոտական աշխատանքի համար ձեր ստացած գնահատականից.

Հարցման արդյունքներով.

- 95.1%–գնահատականը համապատասխանում է իրենց կատարած աշխատանքին
- 3.7% – գնահատականը նույնիսկ բարձր է իրենց սպասումներից
- 1.2%–գնահատականը չի համապատասխանում իրենց կատարած աշխատանքին

Հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ուսանողների մեծամասնությունը (**95.1%)** իրենց ստացած գնահատականը համարել են օբյեկտիվ և համարժեք, այսինքն գնահատման համակարգը ուսանողների համար հասկանալի է ու ընդունելի, նրանց և դասախոսների միջև գնահատման պատկերացումները համընկնում են: ՈՒսանողների **3. 7%-**ը թեև գոհ են ստացած գնահատականից, այնուամենայնիվ՝ սպասում էին ավելի ցածր արդյունքի, ուսանողների շատ քիչ մասն է (**1.2%**) դժգոհություն հայտնել, որ գնահատականը համարժեք չի եղել իր կատարած աշխատանքին (ՏԳՖ-1ուսանող):

Ուսանողները գնահատել են իրենց կատարած աշխատանքը՝ հետևյալ չափանիշներով.

- **Աշխատանքի նպատակի և խնդիրների ձևակերպում – 64%** (նախորդ ուստարի՝ 55%) - Սա համեմատաբար ցածր ցուցանիշ է, ինչը նշանակում է, որ ուսանողները դժվարանում են հստակ ձևակերպել իրենց հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտողների համար բարդությունը կայանում է նրանում, որ պահանջում է տեսական գիտելիքների ու հստակ մտածողության համադրում:
- **Թեմայի արդիականության գնահատում – 73%** (նախորդ ուստարի՝ 59%) - Ուսանողներն ընդհանրապես կարողացել են տեսնել թեմայի կիրառելիությունը ու

արդիականությունը, ինչը խոսում է՝ գիտական հետաքրքրության ձևավորման մասին:

- **Տեղեկատվության հավաքագրում** – 70% (նախորդ ուստարի՝ 64%) - Համեմատաբար լավ ցուցանիշ է, ինչը ցույց է տալիս, որ ուսանողները կարողացել են գտնել համապատասխան աղբյուրներ, սակայն դեռ կան խնդիրներ՝ աղբյուրների ընտրության և վերլուծության առումով: Այս չափանիշի հետ կապված նաև բաց հարցերում ուսանողները նշել էին, որ ունեն խնդիր նյութերի անհասանելիության հետ կապված:
- **Արդյունքների ներկայացում** – 74% (նախորդ ուստարի՝ 70%) -սա նշանակում է, որ ուսանողները հիմնականում կարողացել են ճիշտ և կառուցվածքային ձևով ներկայացնել իրենց հետազոտության վերջնական տվյալները և արդյունքները: Սա վկայում է նաև խմբագրական կամ մեթոդաբանական աջակցություն ստանալու մասին:
- **Եզրակացության ձևակերպում** – 80% (նախորդ ուստարի՝ 67%) - սա ամենաբարձր ցուցանիշն է, ինչը վկայում է այն մասին, որ ուսանողները կարողացել են ամփոփել, վերլուծել տվյալները և անել հետևություններ:

Եզրակացություն.

Ելնելով հարցման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ամենաբարձր արդյունքները գրանցվել են եզրակացության ձևակերպման, արդյունքների ներկայացման և թեմայի արդիականության գնահատման ոլորտներում:

ՈՒշադրություն պետք է դարձնել հատկապես նպատակների և խնդիրների ձևակերպմանը, որը ընդհանուր առմամբ այնքան էլ վատ ցուցանիշ չէ, բայց համեմատաբար ավելի ցածր տոկոս ունի առավելագույն միավորների տեսանկյունից:

Հարկ է նշել, որ 2024-2025 ուստարում ուսանողների կողմից իրականացված հետազոտական աշխատանքների ինքնուրույն վերլուծությունը վկայում է որակապես ավելի բարձր արդյունքների մասին՝ նախորդ տարվա համեմատությամբ: Մասնավորապես՝ հինգ հիմնական հմտությունների բոլոր ցուցանիշները (նպատակի և խնդիրների ձևակերպում, թեմայի արդիականության գնահատում, տեղեկատվության

հավաքագրում, արդյունքների ներկայացում, եզրակացության ձևակերպում) 2024-25ուստարում գերազանցում են նախորդ ուստարվա համապատասխան ցուցանիշներին:

Սա կարևոր դրական միտում է, որը վկայում է, որ ուսանողները ոչ միայն ինքնուրույն են աշխատել, այլև հնարավոր է, որ իրականացված մեթոդական կամ կազմակերպական բարելավումներն արդյունք են տվել, ինչպես նաև հետևանք է մասնաճյուղի կողմից գործընթացի իրականացման պարբերաբար վերանայվման և բարելավման:

4. Հարց. Գնահատեք դասախոսի աջակցությունը

Ուսանողները գնահատել են դասախոսի աջակցությունը տարբեր փուլերում.

- **Թեմայի ընտրություն – 81%** (նախորդ ուստարի՝ 65%)

  Սա բավականին բարձր ցուցանիշ է և վկայում է այն մասին, որ դասախոսները իրենց աջակցությունն են ցուցաբերել ուսանողներին՝ թեմաների ընտրության հարցում:

- **Հետազոտական մեթոդների ընտրություն – 71%** (նախորդ ուստարի՝ 60%)

  Չնայած դասխոսների աջակցությունն այս փուլում փոքր-ինչ ցածր է, բայց այնուամենայնիվ այն բարձր է, ինչը վկայում է մեթոդաբանական խորհրդատվության առկայության մասին:

- **Վերլուծությունների իրականացում – 72%** (նախորդ ուստարի՝ 59%)

  Սա վատ ցուցանիշ չէ և փաստում է դասախոսների ներգրավվածության մասին:

- **Գրականության և մեթոդական նյութերի ընտրություն – 74%** (նախորդ ուստարի՝ 59%)

  Ուսանողները հիմնականում գոհ են տրամադրված նյութերից և գրականության հղումներից, սակայն որոշ ուսանողների համար տեղեկությունները բավարար և հասանելի չեն եղել:

- **Աշխատանքի արդյունքների ձևակերպում – 75%** (նախորդ ուստարի՝ 60%)

  Սա կրկին ցույց է տալիս, որ ուսանողները ստացել են համապատասխան ուղղորդում աշխատանքի ավարտման փուլում:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ արդյունքները գոհացուցիչ են, դասախոսների աջակցությունը հետազոտական աշխատանքի ընթացքում գնահատվել է բավականին բարձր բոլոր հինգ փուլերում: Առավելագույն աջակցություն իրականացվել է թեմայի ընտրության և արդյունքների ձևակերպման փուլերում, ինչը կարևոր նախապայման է հետազոտական աշխատանքի հաջող ավարտի համար:

2024-2025 ուսումնական տարում դասախոսների կողմից ուսանողների աջակցությունը հետազոտական աշխատանքի տարբեր փուլերում գնահատվել է ավելի բարձր քան նախորդ տարի, ինչը վկայում է մի շարք որակական դրական փոփոխությունների մասին.

- կրթական միջավայրը դարձել է ուսանողակենտրոն, որտեղ ուսանողները ստացել են շարունակական ուղղորդում և աջակցություն,
- դասախոսների ավելի ակտիվ ներգրավվածություն՝ հատկապես թեմայի ընտրության և եզրակացությունների ձևակերպման փուլերում,
- դասախոսների կողմից շարունակաբար իրականացվող նպատակային խորհրդատվություններ:

Ընդհանուր առմամբ, դասախոսների աջակցության մակարդակի բարելավումը կարելի է դիտարկել որպես հաջողված մեթոդաբանական և կազմակերպչական փոփոխությունների արդյունք, որոնք էականորեն նպաստել են ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը:

Բաց հարցեր.

1. Հարց. Արդյո՞ք ձեր հետազոտության արդյունքները կարող են կիրառվել, որտե՞ղ և դրա համար ի՞նչ է անհրաժեշտ:

Ուսանողների **82. 6,%**-ը նշել է, որ հետազոտության արդյունքները կարող են հետագայում կիրառվել: Հետազոտության արդյունքների կիրառման հնարավորությունները բավականին բազմազան են և ընդգրկում են տարբեր ոլորտներ՝ պայմանավորված մասնագիտական առանձնահատկություններով:

Ըստ ուսանողների հետազոտությունները կիրառելի են հատկապես հետևյալ ոլորտներում.

- դպրոցներում ու բուհերում ուսումնական գործընթացի բարելավման համար,
- ծրագրավորման ոլորտում՝ կախված պահանջվող հմտություններից,
- հետազոտական կենտրոններում,
- հասարակական կազմակերպություններում՝ կառավարման ոճերի նրբություններին և հմտություններին տիրապետելու համար,
- բրենդինգի մեջ:

Այսպիսով, հետազոտությունները կարող են ոչ միայն ունենալ կիրառություններ տարբեր ոլորտներում, այլև կարող են աշխատել որպես հարթակ հետագա ուսումնասիրությունների և գիտական գործունեությունների համար:

2. Հարց. Ի՞նչ խնդիրների եք հանդիպել հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում:

Հարցման արդյունքում հիմնականում խնդիրներ արձանագրվել են հումանիտար ֆակուլտետի ուսանողների կողմից՝ կապված մասնագիտական գրականության պակասի և հասանելիության, օտարալեզու գրականությունից օգտվելու դժվարությունների, հետազոտական աշխատանք իրականացնելու համար ֆինանսական միջոցներ չհատկացնելու հետ (ՀԳՖ-1 ուսանող):

Մյուս երեք ֆակուլտետներում ուսանողները նշել են, որ առանձնապես բարդ խնդիրների չեն հանդիպել կամ անհաղթահարելի խոչընդոտներ չեն եղել:

- **Նյութերի և գրականության ձեռքբերման խնդիրներ**
  - Անհրաժեշտ տեսական նյութերի և գրականության դժվար հասանելիությունը,
  - Հայալեզու գրականության և նյութերի սակավությունը,
  - Տեղեկատվության սահմանափակությունը:

Բարելավման առաջարկներ.

Հետազոտական աշխատանքների ընթացքում հանդիպած խնդիրները կարող են լուծվել մի շարք տարբերակներով, որոնք կօգնեն բարելավել աշխատանքային ընթացքը և արդյունքները: Հաշվի առնելով առաջացած խնդիրները՝ ներկայացնենք մի քանի առաջարկ՝

Գրականության հավաքագրման հարցում կարող են օգնել առցանց գրադարանները, գիտական տվյալների բազաները (օրինակ՝ Google Scholar, JSTOR, ResearchGate), որոնք պարունակում են թե՛ հայերեն, թե՛ օտարալեզու նյութեր: Շատ մասնագիտական հոդվածներ և գրքեր հասանելի են բաց աղբյուրների միջոցով (Open Access), ինչը հնարավորություն կտա օգտվել էլեկտրոնային տարբերակներից:

Գիտական գրադարանների և ինստիտուտների հետ մասնաճյուղի գրադարանի համագործակցությունը կարող է օգնել դժվար հասանելի նյութեր գտնելու հարցում:

3. Հարց. Ի՞նչ առաջարկներ ունեք հետազոտական աշխատանքի կազմակերպման և գնահատման բարելավման համար:

Առավել ակտիվ են արձագանքել հումանիտար գիտությունների ֆակուլտետում, սակայն մեծ մասը պարզապես նշում են՝ «առաջարկներ չունեմ»: Մյուս երեք ֆակուլտետներում առաջարկները շատ սահմանափակ են և հիմնականում դրական գնահատականներ են հնչում:

- **Առաջարկներ ուսանողների կողմից.**

- Ուսանողները ցանկանում են, որ դասախոսները տրամադրեն հավաստի, վստահելի նյութեր, որոնց հիման վրա կարելի է կատարել գիտական հետազոտություն (ՀԳՖ):
- Կան առաջարկներ խթանել խմբային հետազոտությունները, հատկապես համայնքներում (ՀԳՖ):
- Ընտրանք ձևավորող խմբերին տրամադրել ֆինանսական աջակցություն մարդկանց ներգրավելու համար (ՀԳՖ-1ուսանող):

Առաջարկներ հետազոտական աշխատանքի կազմակերպման և բարելավման համար.

Վերլուծելով բոլոր տրված պատասխանները, կարելի է առանձնացնել մի քանի հիմնական թեմաներ և առաջարկություններ, որոնք կօգնեն բարելավել հետազոտական աշխատանքի կազմակերպումը և գնահատումը:

1. Դասախոսների կողմից նյութերի տրամադրում.

- Առաջարկել դասախոսներին ուղղորդել ուսանողներին օգտվելու թիրախային մեթոդական գրականությունից, առավել հասանելի և հավաստի աղբյուրներից (այդ թվում բաց հասանելիությամբ աղբյուրներից)

2. Խմբային հետազոտությունների խրախուսում.

- Կազմակերպել թեմատիկ խմբային հետազոտություններ, որոնք կներառեն համայնքների այցելություններ, հարցազրույցներ, դիտարկումներ:

ԵՊՀ ԻՄ ԿԲՈԱ բաժին